ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 Մարտի 2019թ. թիվ 10

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 06-021-0039-0016 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԵՎ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188 հոդվածի 2 – րդ կետի 1 – ին մասով, 4 – րդ կետի 1 – ին մասով «Տեղական Ինքնակառավարման մասին» օրենքի 38 – րդ հոդվածով, ՀՀ Կառավարության «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» 2006 թվականի մայիսի 18 – ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով ՀՀ գործող հողային օրենսգրքի 64 – րդ հոդվածի 2 – րդ կետով և հիմք ընդունելով հողի բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 29.07.1991թ – ի թիվ 169/1 որոշումը, հողամասի սահմանների վերաբերյալ Արսեն Ռուդիկի Իսահակյան ԱՁ – ի կողմից կազմված հատակագիծը, 15.03.2019թ – ի ժառանգության վկայագիրը և հարգելով համայնքի բնակիչ Նունե Բաղրամյանի դիմում-խնդրանքը այն մասին, որ Արևաշող համայնքում 0039-0016 ծածկագրի տակ գտնվող 0.2908 հա տնամերձ հողամասի վրա 1991թ – ին ինքնակամ կառուցել է 107.95քմ ընդհանուր մակերեսով թիվ 1 և 98.17քմ ընդհանուր մակերեսով թիվ 2 բնակելի տներ, 48.02քմ բաց պատշգամբ, 50.08քմ մակերեսով անասնագոմ, 30.98քմ մակերեսով ամառային խոհանոց, 21.49քմ ավտոտնակ, 9.44քմ մակերեսով հարթակ:*

*Նկատի ունենալով, որ տվյալ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, և քանի, որ կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չեն գտնվում հողային օրենսգրքով նախատեսված 60 – րդ հոդվածի ցանկում*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. *Օրենքի ուժով օրինականացնել և ճանաչել Նունե Վրույրի Բաղդասարյանի /ծնված1968թ./ սեփականության իրավունքը Արևաշող համայնքում 06-021-0039-0016 ծածկագրի տակ սեփականության իրավունքով իրենց պատկանող 0.2908 հա տնամերձ հողամասը, նրա վրա ինքնակամ կառուցված 107.95քմ ընդհանուր մակերեսով թիվ 1 և 98.17քմ ընդհանուր մակերեսով թիվ 2 բնակելի տները, 48.02քմ բաց պատշգամբը, 50.08քմ մակերեսով անասնագոմը, 30.98քմ մակերեսով ամառային խոհանոցը, 21.49քմ ավտոտնակը, 9.44քմ մակերեսով հարթակը:*
2. *Հանձնարարել հաշվապահին իրականացնելու ինքնակամ շինությունների համար օրենքով սահմանված վճարի գանձման աշխատանքները գանձելով 168355 (մեկ հարյուր վաթսունութ հազար երեք հարյուր հիսունհինգ) ՀՀ դրամ*
3. *Որոշումն ընդունելու օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60 – օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:*
4. *Սույն որոշման մեկ օրինակը տրամադրել համապատասխան ստորաբաժանմանը, որպես հիմք վերը նշված անշարժ գույքերին պետական գրանցում տալու համար:*
5. *Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Պ.ՊԱՊԻԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 Ապրիլի 2019թ. թիվ 12

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 06-021-0039-0016 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԵՎ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29 _ Ի ԹԻՎ 10 ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188 հոդվածի 2 – րդ կետի 1 – ին մասով, 4 – րդ կետի 1 – ին մասով «Տեղական Ինքնակառավարման մասին» օրենքի 38 – րդ հոդվածով, ՀՀ Կառավարության «Ինքնակամ կառույցների օրինականացման եվ տնօրինման կարգը հաստատելու մասին» 2006 թվականի մայիսի 18 – ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով ՀՀ գործող հողային օրենսգրքի 64 – րդ հոդվածի 2 – րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ Իրավական ակտերի մասին» օրենքի 38 – րդ հոդվածով և հիմք ընդունելով հողի բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 29.07.1991թ – ի թիվ 169/1 որոշումը, հողամասի սահմանների վերաբերյալ Արսեն Ռուդիկի Խաչիկյան ԱՁ – ի կողմից կազմված հատակագիծը, 15.03.2019թ – ի ժառանգության վկայագիրը և հարգելով համայնքի բնակիչ Նունե Բաղրամյանի դիմում-խնդրանքը այն մասին, որ Արևաշող համայնքում 06-021-0039-0016 ծածկագրի տակ գտնվող 0.2908 հա տնամերձ հողամասի վրա 1991թ – ին ինքնակամ կառուցել է 107.95քմ ընդհանուր մակերեսով թիվ 1 և 98.17քմ ընդհանուր մակերեսով թիվ 2 բնակելի տներ, 48.02քմ բաց պատշգամբ, 50.08քմ մակերեսով անասնագոմ, 30.98քմ մակերեսով ամառային խոհանոց, 21.49քմ ավտոտնակ, 9.44քմ մակերեսով հարթակ:*

*Նկատի ունենալով, որ տվյալ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, և քանի, որ կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չեն գտնվում հողային օրենսգրքով նախատեսված 60 – րդ հոդվածի ցանկում*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ

1. *Օրենքի ուժով օրինականացնել և ճանաչել Նունե Վրույրի Բաղրամյանի /ծնված1968թ./ սեփականության իրավունքը Արևաշող համայնքում 06-021-0039-0016 ծածկագրի տակ սեփականության իրավունքով իրենց պատկանող 0.2908 հա տնամերձ հողամասը, նրա վրա ինքնակամ կառուցված 107.95քմ ընդհանուր մակերեսով թիվ 1 և 98.17քմ ընդհանուր մակերեսով թիվ 2 բնակելի տները, 48.02քմ բաց պատշգամբը, 50.08քմ մակերեսով անասնագոմը, 30.98քմ մակերեսով ամառային խոհանոցը, 21.49քմ ավտոտնակը, 9.44քմ մակերեսով հարթակը:*
2. *Անվավեր ճանաչել համայնքի ղեկավարի 2019 թվականի մարտի 29 – ի թիվ 10 որոշումը:*
3. *Սույն որոշման մեկ օրինակը տրամադրել համապատասխան ստորաբաժանմանը, որպես հիմք վերը նշված անշարժ գույքերին պետական գրանցում տալու համար:*
4. *Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Պ.ՊԱՊԻԿՅԱՆ